

փորձերուն մէջ: Միմոն Խան նոյնիսկ ապրտամբեցաւ տեղական մահմետական տիրակալութեանց դէմ, բայց ի զուր: Ինչ որ ցաւալի է, սա է որ թէ՛ Հայոց եւ թէ՛ Վրացոց մէջ եւրոպական քաղաքական խրթնութիւններէն հասկցող մարդ չկար: Միամիտ էին մեր, ինչպէս Վրաց առաջնորդները, երկրին անտանելի պայմաններուն պատճառած յուսահատութեան աներեւակայելի յիմարութեանց կը դիմէին՝ փրկուելու ցանկութեամբ: Հետաքրքրական է, որ թէ՛ մեր եւ թէ՛ վրացիներու առաջնորդները աւելի յաջող էին Թուրք կամ Պարսիկ իշխանութեանց հետ վարուելու քաղաքականութեան մէջ քան թէ եւրոպայի հետ: Ըստ իս՝ շատ աւելի մեծ կ'ըլլար մեր շահը, եթէ ունենայինք «ներքին» քաղաքականութիւն մը, քան թէ ապարդիւն եւ քայքայիչ այն քաղաքականութիւնը, որուն հետեւեցանք ապշեցուցիչ յարատեւութեամբ մը ի կորուստ եւ նոյն իսկ բնաջնջում մեզի:

Ճէնքինսըն կը վկայէ, որ Շամախ վերադարձին Վրաց թագաւորէն (Միմոն Խանէն) Հայ ներկայացուցիչ մը կուզայ իրեն, իրմէ խրատ ստանալու եւ նոյն ատեն օժանդակութիւն փնտռելու տեղական քրիստոնէից մահմետական լուծէն փրկութեան համար: Ոսակցութիւնը, ինչպէս նաեւ Անգլիացիին պատասխանը բերանացի կ'ըլլայ առ ի ապահովութիւն: Ճէնքինսընի պատասխանին մէջ ամենէն ուշագրաւ խորհուրդը Ռուսիոյ դիմելու խորհուրդն է: Ինք, որ այնքան լաւ կը ճանչնար Ռուսիան, որուն վրայ կ'իշխէր Իվան Ահեղը, ինքը որ Յարին մասնաւոր պաշտպանեալ եւ մտերիմն էր, սակէ աւելի վտանգաւոր խորհուրդ չէր կրնար տալ ապագայ ապստամբներուն:

Հայոց եւ Վրաց ապստամբելու խորհուրդ տալ կամ քաջալերել՝ անոնց յոյս տալով Ռուսական օժանդակութիւն կամ ատոր կարելիութեան՝ այնպիսի ատեն մը, երբ Թուրքերը իրենց յարձակողականը նոյնիսկ եւրոպայի սրտին մէջ, Դանուբէն անդին կը տանէին, այնպիսի ատեն մը, երբ Թրքական հորդանքը Միջերկրականը իր կղզիներով կը նուաճէին, կը դրաւէին Հոռոսն ու Կիպրոսը եւ չտեսնը-

ւած պատերազմ կը մղէին Մալթայի դէմ: Այդպիսի ատեն մը խորհուրդ տալ խեղճուկըրակ խումբ մը վրացիներու եւ հայերու Թուրքերուն դէմ ապստամբել՝ ըստ իս ամենացած վերաբերմունք մըն էր, ոչ մէկ կերպով արդարանալի:

Իսկ ապագայ ապստամբներուն պաշտպանը պիտի ըլլար Իվան Ահեղը, չտեսնուած վայրագութեամբ բռնակալ մը, որ Լեհական կամ իրեն ընդդիմացող ուրիշ քրիստոնեայ ժողովուրդներուն պատուհասը եղաւ՝ նուաճուած քաղաքի մը մէջ միայն 60,000 մեծ ու պզտիկ քրիստոնեայ բնակչութիւն ջարդելով: Իվան, հակառակ իր վայրագութեան, նոյնիսկ Մոսկուան շիրցաւ փրկել Թաթարներէն, որոնք դրաւեցին քաղաքը, կողոպտեցին զայն, յետոյ ալ հրոյ ճարակ ըրին: Եւ ձէնքինսըն վրաց ու հայոց ազատարար ցոյց կուտար այս «քրիստոնեայ» վեհապետը:

Կ'երեւայ թէ կամ Թուրքերը կարեւորութիւն չտուին ազատագրական այս միամիտ եւ անարժէք փորձերուն, կամ թէ այդ փորձերը յիշուելէ աւելի լրջութիւն մը չունէին, այլապէս դժուար պիտի ըլլար համոզուել, որ Թուրքերը այն ատեն իսկ տեղն ու տեղը բնաջինջ չըրին թէ մեզ եւ թէ վրացիները: Ես կը խորհիմ, որ հայ-վրացական օգուտը Սուլթաններուն համար աւելի նշանակութիւն ունէր, քան անոնց իր թէ անջատողական ձրդատումները կրնային վնաս բերել, եւ այդ պատճառաւ իսկ մեր նախնիք ազատեցան անագորոյն պատիժէ մը, որ այնքա՛ն փորձառութեամբ Թուրքերը սովոր են անխտիր տալ:

Ազատագրական այս շարժումին մասին ժամանակին մանրամասն արդէն խօսած եմ այլուր 1), որով աւելորդ է կրկնութիւն ընել:

Ճէնքինսընի նպատակը որոշ էր, այն է՝ դրդուել Արեւելքի քրիստոնեաները, մանաւանդ հայերն ու վրացիները Պարսից եւ Թրքաց դէմ, այդ բռնատէրերուն վայրագութեամբ բնաջինջ ընել զանոնք եւ ատով իսկ արմատա-

1) (Անահիտ», Փարիզ, 1937, թիւ 5-6 — «Հայ Ազատագրական փորձ մը ԺԶ. դարուն»: